

Արձանագրություն №4/2021-2022

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2021թ. դեկտեմբերի 9-ին տեղի ունեցած թիվ 4 արտահերթ նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 74-ը (յոթանասունչորսը):

Նիստը նախագահում էր ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հովհաննես Հովհաննիսյանը: Նիստի քարտուղարն էր Լևոն Հովսեփյանը:

Նիստը նախագահող Հ. Հովհաննիսյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և առաջարկեց հաստատել նիստի օրակարգը՝ ընթացիկ հարցերի թվում ներառելով նոր անվանական կրթաթոշակների հաստատման մասին հարցը.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր պաշտոնի համար համալսարանի ստորաբաժանումից առաջադրված պրոֆեսորադասախոսական կազմի թեկնածուի ընտրություն (զեկ.՝ ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյան):
2. ԵՊՀ գիտական խորհրդի էթիկայի հանձնաժողովի աշխատակարգի հաստատում (զեկ.՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի անդամ Ա. Թադևոսյան):
3. ԵՊՀ բարեվարքության (էթիկայի) կանոնադրքի հաստատում (զեկ.՝ իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի անդամ Ա. Թադևոսյան):

Ընթացիկ հարցեր:

- 4.1.2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի նոր անվանական կրթաթոշակների հաստատման մասին:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց, և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.**- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամի թափուր պաշտոնի համար համալսարանի ստորաբաժանումից

առաջադրված պրոֆեսորադասախոսական կազմի թեկնածուի ընտրության մասին: Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանը նշեց, որ հոգաբարձուների խորհրդի անդամի ընտրության ընթացակարգային խնդիրների պատճառով որոշում էր կայացվել դադարեցնել պրոֆեսորադասախոսական կազմի թեկնածու, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Աննա Փոլադյանի լիազորությունները սեփական դիմումի համաձայն: Ընթացակարգային խնդիրը լուծելու նպատակով որոշվեց ևս մեկ ընտրություն կազմակերպել, որի համար ջենտլմենական համաձայնության կարգով առաջադրվել էր կրկին Աննա Փոլադյանը: Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից առաջադրված թեկնածուն էր.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	ՊԱՇՏՈՆԸ
1.	Փոլադյան Աննա Արշակի	կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Հ. Հովհաննիսյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Գրիգորյան Կարեն (նախագահ)
2. Մանուկյան Ժակ
3. Մարկոսյան Էմմա

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 74 անդամներից 73-ը: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Կ. Գրիգորյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

Հ/Հ	ԱԶԳԱՆՈՒՆ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Փոլադյան Աննա Արշակի	56	13	4

Որոշեցին. - ԵՊՀ պրոֆեսորադասախոսական կազմից հոգաբարձուների խորհրդի անդամության (թափուր տեղի) թեկնածու առաջադրել ԵՊՀ կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Աննա Արշակի Փոլադյանին, և ՀՀ վարչապետի

հաստատմանը ներկայացնելու նպատակով դիմել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը:

2.Լսեցին.- ԵՊՀ գիտական խորհրդի էթիկայի հանձնաժողովի աշխատակարգի հաստատման մասին: Իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի անդամ Ա. Թադևոսյանը ներկայացրեց, որ առաջին փորձն է արվում ունենալ էթիկայի համակարգված կանոնագիրք և էթիկայի հանձնաժողովի աշխատակարգ: Աշխատակարգում ներկայացված են հանձնաժողովի նախագահի և անդամների իրավասությունները, էթիկայի կանոնների խախտման դեպքերի քննարկման, որոշումների ընդունման, հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման կարգերը: Ա. Թադևոսյանի դիտարկմամբ՝ էթիկայի նորմերի խախտումը պետք է դիտվի որպես արգահատելի արարք, ինչը հետևություններ անելու հիմք կտա: Հանձնաժողովն էթիկայի կանոնների խախտման վերաբերյալ հաղորդումների հիման վրա հարուցելու է գիտական խորհրդին եզրակացություն տրամադրելու վերաբերյալ վարույթներ, ներկայացնելու է առաջարկություններ էթիկայի կանոնների պահպանման վերաբերյալ ծագած հարցերի շուրջ, ինչպես նաև տալու է պարզաբանումներ էթիկայի կանոնների կամ առանձին կանոնի վերաբերյալ: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանը նշեց, որ խնդիրը դիտարկվում է զուտ բարոյական և էթիկական տիրույթում: Ա. Թադևոսյանը հիշեցրեց, որ ԵՊՀ գիտական խորհրդի էթիկայի մշտական հանձնաժողովը ստեղծվել է 2020թ. դեկտեմբերի 24-ին և սահմանվել է անհատական կազմը: Ռեկտորի ժ/պ Հ. Հովհաննիսյանը նշեց, որ հանձնաժողովի նախագահ է ընտրվել աստվածաբանության ֆակուլտետի դեկան Անուշավան Եպիսկոպոս Ժամկոչյանը: Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը հետաքրքրվեց, թե քանի՞ հարց է նախկինում քննարկել հանձնաժողովը, ինչին ի պատասխան՝ Ա. Թադևոսյանը նշեց, որ հանձնաժողովը նախկինում մոտ 6-7 հարց է քննել և եղել են որոշումներ:

Որոշեցին. - Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդին կից էթիկայի մշտական հանձնաժողովի աշխատակարգը:

3.Լսեցին.- ԵՊՀ բարեվարքության (էթիկայի) կանոնագրքի հաստատման մասին: Իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի անդամ Ա. Թադևոսյանը ներկայացրեց ԵՊՀ բարեվարքության (էթիկայի) կանոնագիրքը, որով սահմանվում են կառավարման մարմինների, պրոֆեսորադասախոսական կազմի, աշխատողների և սովորողների բարեվարքության (էթիկայի) կանոնները: Նա փաստեց, որ առաջարկվող կանոնագրքով համալսարանի կառավարման մարմինների, պրոֆեսորադասախոսական կազմի և աշխատողների համար սահմանվել է էթիկայի տասը, իսկ ուսանողների համար՝ չորս կանոն: Ըստ զեկուցողի՝ դրանք պատժիչ նորմեր չեն, այլ միտված են բարոյական հարթության մեջ գնահատականներ տալուն: Կանոնագրքում

ներկայացվել են էթիկայի սկզբունքները, դրանց մեկնաբանությունները և աշխատողների ու սովորողների էթիկայի կանոնները: Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան Մ. Գրիգորյանը հետաքրքրվեց, թե ո՞ր հարցերը կարող են քննության հիմք լինել, ինչին ի պատասխան՝ Ա. Թադևոսյանը նշեց, որ կանոնագրքում նախատեսված են էթիկայի 14 կանոններ, և դրանց խախտման դեպքում են հանձնաժողովում վարույթներ հարուցվելու: Հանձնաժողովի որոշումներն առավելապես բարոյական տիրույթում են լինելու: Ի հավելումն՝ իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը նկատեց, որ հայցի արդյունքը հանձնաժողովի կողմից ներկայացվելու է գիտական խորհրդին, և որպես այդպիսին, սանկցիաներ չեն նախատեսվում և միայն գիտական խորհրդում հրապարակումը, բարձրաձայնումը բավարար է լինելու ազդեցության ու հետևանքների առումով: Սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան Ա. Մկրտիչյանը նշեց, որ միջազգային գործընկերները տարբեր առիթներով հարցրել են գիտական հետազոտությունների ստանդարտների ու նորմերի առկայության մասին և հետաքրքրվեց, թե արդյո՞ք նախատեսվում է շեշտադրում կատարել այդ բաղադրիչի վրա: Ի պատասխան՝ ռեկտորի Ժ/պ Շ. Հովհաննիսյանը նկատեց, որ գիտական բարեվարքության հանձնաժողովի ստեղծման առաջարկ կա, պետք է խորքային ուսումնասիրել և անհրաժեշտության դեպքում կիրավիրվի գիտական խորհրդի հատուկ հանձնաժողով այդ ուղղությամբ աշխատանքների իրականացման նպատակով: Պրոռեկտոր Ռ. Բարխուդարյանը հավելեց, որ դա բավական սպեցիֆիկ հետազոտական ոլորտներին է վերաբերում, կենտրոնները լավ փորձ ունեն և կարելի է այդ փորձը հիմք վերցնել և աշխատել այդ ուղղությամբ:

Որոշեցին. - Հաստատել ԵՊՀ բարեվարքության (էթիկայի) կանոնագիրքը:

4.Լսեցին.- 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի նոր անվանական կրթաթոշակների հաստատման մասին: Գիտքարտուղար Լ. Հովսեփյանը ներկայացրեց, որ Ֆարմացիայի ինստիտուտը ներկայացրել է անվանական 3 նոր կրթաթոշակ, մեկ ուսանողի վարձավճարի 50%-ի փոխհատուցում, իսկ Սոցիոլոգիայի ֆակուլտետը ներկայացրել է անվանական 1 նոր կրթաթոշակ: Վերջինս նկատեց, որ բոլոր անվանական կրթաթոշակները դրսի (արտաքին) ֆինանսավորմամբ են: Սոցիոլոգիայի ֆակուլտետում Գևորգ Արշակյանի անվան կրթաթոշակը նախատեսվում է տրամադրել միանվագ՝ 600.000 դրամ գումարի չափով:

Որոշեցին. - Հաստատել 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի նոր անվանական կրթաթոշակները՝

Ռաֆայել Մաթևոսյանի անվան-50.000 ՀՀ դրամ

1. Մարկոսյան Էմմա Արմենի – ֆարմ., դեղերի որակի վերահսկ. մագ. 1-ին կուրս

Միհրան Բարոնյանի անվան-50.000 ՀՀ դրամ

2. Խաչատրյան Անի Արմենի - ֆարմ., դեղերի որակի վերահսկ. մագ. 1-ին կուրս

«Արփիմեդ» ՍՊԸ ընկերության -50.000 ՀՀ դրամ

3. Թաղևոսյան Լիլիթ Պողոսի - ֆարմ., դեղերի որակի վերահսկ. մագ. 1-ին կուրս
Գևորգ Արշակյանի անվան- (միանվագ) 600.000 ՀՀ դրամ
4. Գևորգյան Գոհար Արշակի – սոցիոլոգիայի ֆակ., մարդկ. ռես. կառ. մագ. 2-րդ կուրս

Գիտական խորհրդի նախագահ՝ Հ. Վ. Հովհաննիսյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ Լ.Ս. Հովսեփյան

14.12.2021թ.